

**ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ**

9) Որո՞նք են իդձի եւ արեան մկրտութիւնները:

Բացի ջուրի մկրտութենէն, ուղղափառ աստուածաբանութեան մէջ կը խօսուի նաեւ իդձի եւ արեան մկրտութիւններու մասին: Իդձի մկրտութիւնը այն է, երբ մէկը մկրտուելու մեծ փափաք ունի, բայց իր կամքէն անկախ եւ հանգամանքներու բերումով կը մահանայ: Եկեղեցին կը հաւատայ, որ նմանատիպ մարդիկ նոյնպէս փրկութեան յոյս ունին: «Ով, որ Տիրոջ անունը կանչէ պիտի փրկուի» (Հռովմ. 10/13): Իսկ արեան մկրտութեամբ կը մկրտուին մարտիրոսները, որոնք իրենց կեանքը կը զոհեն եւ արիւն կը թափեն յանուն Յիսուսի եւ իրենց հաւատքին: «Ան, որ իր անձը ինծի համար կը կորսնցնէ, պիտի զտնէ զանիկա» (Մատթ. 10/39):

10) Ի՞նչ է ընդհանրական մկրտութիւնը:

Երբ խումբերով եւ մեծ թիւով մարդիկ կը մկրտուին մկրտութեան մէկ արարողութեան ժամանակ: Օրին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի կողմէ արքայական ընտանիքի եւ ժողովուրդի մկրտութիւնը: Ընդհանրական Ս. մկրտութիւններ տեղի ունեցան նաեւ խորհրդային կարգերու փլուզումէն ետք, երբ բազում մարդիկ, հայորդիներ հոգեւոր վերազարթօնք կ'ապրէին, մկրտուեցան եւ քրիստոնեայ դարձան:

**ԱՂԱՆԴԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ**

**ԲԱՍԸԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆԸ 6- ԿԻՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐԸ**

Եհովայի Վկաները կնոջ համար կ'ըսեն, թէ այր մարդուն յարաբերաբար «ստորադաս արարած մըն է» եւ անոր համար ալ բացարձակ հայեցողութիւն է ունէ կին «Աստուածամայր» կոչել: Բայց Աստուածաշունչը ցոյց կու տայ, թէ Աստուած այր մարդն ու կինը հաւասար ստեղծեց, երկուքն ալ իր պատկերով ու նմանութեամբ (Մննդոց 1.27): Անոնց ստեղծման օրը երկուքին ալ տուաւ «Ադամ», այսինքն՝ «մարդ» անունը (Մննդոց 5.2), եւ երկուքին ալ տուաւ աշխարհին տէր ըլլալու պատասխանատուութիւնը (Մննդոց 1.28): Ճիշդ է, որ անոնք այր մարդուն «օգնական» կոչուած են (Մննդոց 2.18), եւ Պօղոս առաքեալ ուսուցանելու արտօնութիւն չի տար անոնց (Ա. Կոր. 14.34-35), բայց անոնք այր մարդուն հետ մէկ միութիւն են (Եփ. 5.25 եւ 28) եւ միշտ ալ պատիւի առաքելայ պէտք է ըլլան (Ա. Պետ. 3.7):

Աստուծոյ Որդին ամօք ու նուաստութիւն չհամարեց « կնոջմէ մը» ծնիլ (Գաղ. 4.4) եւ մարդոց հաւասարութիւնը յայտարարեց:

Միրելի ընթերցող, ՃՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

**ՀԱՍՅԷ.**

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jerak ճրագ թերթ



ԲՈՒ ԽՕՍԲԵՂ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԾՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 3 ՅՈՒՆԻՍ 2018

ԹԻԻ 22

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ**  
Առ. 9.1-6: Չք. 3.7-4.9: Եբր. 9. 1-10:  
**ՅԻՍՈՒՄ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈԿՅԱՆՆՈՒ 10.22-30**

**SՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ**

Զմեռ էր: Երուսաղէմի մէջ տաճարին Նաւակատիքի տօնակատարութիւնը տեղի կ'ունենար: Յիսուս տաճարին Սողոմոնի սրահին մէջ կ'երթեւեկէր, երբ իր շուրջ հաւաքուեցան հրեաներ եւ հարցուցին. «Մինչեւ ե՞րբ մեր հոգին պիտի հանես: Եթէ դուն ես Քրիստոսը՝ յստակ ըսէ՛ մեզի»:

Յիսուս պատասխանեց. «Արդէն իսկ ձեզի ըսած եմ, սակայն չէք հաւատար: Այն գործերը, որ Հօրս անունով կը կատարեմ անոնք իսկ կը վկայեն, թէ ո՛վ եմ ես: Բայց դուք չէք հաւատար, որովհետեւ իմ ոչխարներէս չէք: Ես ոչխարներս կը ճանչնամ: Անոնք ձայնս կը լսեն եւ կը հետեւին ինծի, ու ես անոնց յախտենական կեանք կու տամ: Անոնք բնաւ պիտի չկորսուին: Ո՛չ որ պիտի կարենայ զանոնք յափշտակել իմ ձեռքէս: Հայրս այդ ոչխարները ինծի տուաւ, եւ ոչ որ կրնայ յափշտակել զանոնք իմ Հօրս ձեռքէն, որովհետեւ Հայրս բոլորէն անելի մեծ է: Ես եւ Հայրս մէկ ենք»:

**Ես ոչխարներս կը ճանչնամ: Անոնք ձայնս կը լսեն եւ կը հետեւին ինծի, ու ես անոնց յախտենական կեանք կու տամ: Անոնք բնաւ պիտի չկորսուին:**

Երկնաւոր Հայրը իր այս իմաստայից խօսքով կու գայ վստահեցնելու բոլոր անոնց՝ որոնք Յիսուսը կը ճանչնան որպէս հովիւ, թէ իրենք պիտի չկորսուին: Այս կը վստահեցնէ, թէ արդէն իրենք մահէն դէպի կեանք անցած են: Միրելի ընթերցողներ, մենք իբրեւ քրիստոնեաներ՝ Քրիստոսի անունը կրող անձեր, կը լսե՞նք Քրիստոսի ձայնը մեր կեանքին մէջ, որ ամէն օր կ'ուզէ մեզի հետ խօսիլ եթէ պատրաստ ըլլանք: Այսօր հրաւիրուած ենք բոլորս լսելու եւ ականջ տալու Քրիստոսի ձայնին:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՏՕՆ



Ս. Էջմիածինի Մայր տաճարը հայոց առաջին եկեղեցին է: Ան կառուցուած է 301-303 թուականներուն, Տրդատ թագաւորին եւ հայոց առաջին հայրապետ՝ Գրիգոր Լուսաւորիչի օրով:

Ս. Գրիգոր Լուսաւորիչը Խոր Վիրապէն ելլելէն ու Քրիստոսի հաւատքը հայերուն մէջ քարոզելէն ետք ունեցաւ տեսիլք մը, ըստ որուն Աստուծոյ Միածին Որդին երկինքէն իջնելով ոսկեայ մուրճով նշեց տաճարին վայրը ու գծեց անոր յատակագիծը: Այս ձեւով է, որ նշանակեցաւ Հայ եկեղեցւոյ սկիզբը եւ մեր այս առաջին եկեղեցին կոչուեցաւ՝ Էջմիածին, խորհրդանշելու համար Աստուծոյ Միածին Որդիին իջած տեղը:

Ս. Էջմիածինի Մայր տաճարը կառուցուեցաւ Վաղարշապատ քաղաքին մէջ: Վաղարշապատը հին Հայաստանի հոգեւոր կեանքի կեդրոնը կը նկատուի եւ հոն հինգերորդ դարէն սկսեալ բացուած է հայկական առաջին դպրոցը: Մայր եկեղեցւոյ անունով, այս քաղաքը նաեւ կոչուած է Էջմիածին: Էջմիածինը կարելի է համարել ուխտավայր ու կարելի է գայն նմանցնել հայկական Երուսաղէմի:

Միածնի էջքը եւ հայ եկեղեցւոյ հաստատուածը Հայաստանեայց եկեղեցւոյ կարեւոր սօներէն է, որ կը նշուի Հոգեգալուստէն ետք եկող երկրորդ Կիրակին եւ Զատիկի 10-րդ Կիրակին:

1700 տարիներ շարունակ, Էջմիածինը ենթարկուած է զանազան աւերումներու: Նորոգութիւններ եղած են, որոնց հետեւանքով անոր նախնական ձեւը խախտած է: Այս փոփոխութիւններու կարգին կարելի է թուել 1682-ին Եղիազար կաթողիկոսին պատուէրով տաճարին կեդրոնը՝ գլխաւոր գմբէթին տակ շինուած «Իջման Սեղանը» եւ եկեղեցւոյ հարաւային, հիւսիսային եւ արեւելեան կողմերը աւելցուած երեք փոքր գմբէթները:

Ըստ մեր եկեղեցւոյ սօնացոյցին, Ս. Էջմիածնի սօնը այս տարի կը գուգադիպի Կիրակի, 3 Յունիս 2018-ին:

### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԿԸ ԿԱՐԴԱՄ

«Նիւթական սնունդը կը պահպանէ մեր մարմինի կենսագործութիւնը, իսկ Սուրբ Գիրքի ընթերցանութիւնը՝ մեր հոգիի կենսագործութիւնը: Սուրբ Գիրքը հոգեւոր սնունդ է, որ կը բերադաշնէ մեր միտքը, կը զօրացնէ եւ հաստատակամ ու իմաստուն կը դարձնէ մեր հոգին, եւ թոյլ չի տար որ անիկա իյնայ անմիտ կիրքերու մէջ, ընդհակառակը, ալ աւելի կը դիւրացնէ անոր ճախրանքը դէպի բարձր՝ երկինք: Ուստի, կ'աղաչեմ, առաւելագոյն ջանասիրութեամբ ընթերցենք Աստուածաշունչ մատեանը: Որովհետեւ կ'ըսեմ, անկարելի է, անկարելի է, որ ոեւէ մէկը փրկուած ըլլար կամ կարենայ փրկուիլ առանց Սուրբ Գիրքի ընթերցանութեան:

Յովհան Ոսկեբերան

# ՄԵՐ ՉԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

## ՅԻՍՈՒՍ ՄԵՐ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԲԺՇԿԷ ԵՒ ԿԸ ՁՕՐԱՅՆԷ ՄԵՁ

1- Վասնզի քու վերքդ պիտի դարմանեմ եւ քու վերքդ պիտի բժշկեմ, կ'ըսէ Տէրը, քանզի քեզ «Ա.խորուած» կոչեցին, «Այս այն Սիոնն է, որ փնտոող չկայ» ըսին: (Երեմեայ 30:17)

2- Երբ երեկոյ եղաւ, Յիսուսի բերին բազմաթիւ դիւահարներ: Յիսուս իր իստով չար ոգիները դուրս հանեց եւ բոլոր հիւանդները բժշկեց, որպէսզի իրականացայ Եսայի մարգարէի բերնով ըսուածը. «Անիկա մեր հիւանդութիւնները վերցուց եւ մեր ցաւերը փարատեց»: (Մատթէոս 8:16,17)

3- Յիսուս բժշկեց այս մարդը, որովհետեւ Իր անունին հաւատաց: Եւ հաւատքն էր, որ Յիսուսի ձեռքով առողջութիւն տուաւ այս մարդուն: (Գործքք Առաքելոց 3:16)

4- Օրհնաբանէ՛ Տէրը, ո՛վ իմ անձս, օրհնաբանէ՛ անոր սուրբ անունը, ո՛վ իմ էութիւնս ամբողջ: Օրհնաբանէ՛ Տէրը, ո՛վ իմ անձս, եւ մի՛ մոռնար անոր բոլոր պարգեւները:

Ա՛ն է, որ կը քու բոլոր մեղքերդ, կը բժշկէ բոլոր հիւանդութիւններդ: Ա՛ն է, որ կեանքդ կը փրկէ կորուստէն, եւ իր սիրովն ու գթութեամբ կը պարուրէ քեզ: Ա՛ն է, որ բարիքներով կը լեցնէ քու կեանքդ, այնպէս որ միշտ երիտասարդ մնաս, արծիւներուն պէս:

Տէրը բոլոր գրկեալներուն արդարութիւն կը հատուցանէ, եւ անոնց իրաւունքը կը պաշտպանէ:

Շարունակէ՛ կարդալ Սաղմոսագիրքէն 103-րդ Սաղմոսը:

# ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

## ԻՍԿԱԿԱՆ ՄԵԾԸ

Ճշմարիտ մեծ մարդը ան է, որ կ'ապրի աստուածահաճոյ կեանք մը առանց սակայն հաւակնութիւնը ունենալու ինքզինք մեծ նկատելու: Քրիստոնեայ մարդը իր մեծութիւնը պէտք չէ տեսնէ իր ունեցած դիրքին, աթոռին կամ դրամին մէջ, այլ՝ իր ապրած հաւատքի կեանքին եւ իր նմաններուն մատուցած իր ծառայութիւններուն մէջ: Մարդ արարածը այնքանով մեծ է, որքանով աստուածատէր եւ մարդատէր է: Երբե՛ք մեծ պէտք չէ կոչել այն մարդը, որ չ'ապրի հաւատքի կեանք մը: Բնա՛ւ մեծ պէտք չէ նկատել այն մարդը, որ ոչնչութիւն կը սեպէ իր նմանները եւ անոնց վրայ իշխել կը փորձէ: Մե՛ծ կոչելի ուզող իր աշակերտներուն Քրիստոս փոքրիկի մը օրինակը տուաւ, որպէսզի սորվեցնէ անոնց եւ մեզի, որ մեծնալու քամբան փոքրանալ ընդունիլն է: Դուք կ'ընդունի՞ս փոքրանալ:

### ԿԱՂԱՉԵՄ ՔԵԶԻ

Տէ՛ր, իջեցո՛ւր Սուրբ Յոգիիդ շնորհքները իմ վրաս, որ միայնակ եմ պատերազմի մէջ առանց օգնականի: Սրբէ՛ Տէ՛ր, հոգիս տաճարը եւ ինձի հետ եղիր Երեկոյները: Բա՛ց հոգիս աչքերը եւ լուսաւորէ՛ միտքս ու խորհուրդներս: Չօրութիւն տո՛ւր ինձի Տէ՛ր իմ Յիսուս եւ ընդունէ՛ օրհնաբանութիւնս: Արթնցո՛ւր զիս գիշերուան խոր քունէն գոհաւալու եւ օրհնելու քեզ, որ քու լեմ իմ մեղքերս: Սուգ եւ արտասուք շնորհէ՛ ինձի լալու, սգալու եւ անդադար աղօթելու Քու առջեւ: Ե. Ասորի